ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՎ (ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ)

ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր – Գործընթաց, շարունակականություն, ժամանակի համապատկեր, գեղարվեստական տարածք, հայրենիք, Արցախ, Սփյուռք, գոյամարտ, ձնհալ, կարծրատիպ:

Գրականության պատմության փորձը ցույց է տալիս, որ գրողները պատմական անցյալին դիմում են ոչ թե պարզապես նրա այս կամ այն իրադարձությունները գեղարվեստականացնելու, այլ պատմության փորձն ու դասերը ներկայի լույսի տակ իմաստավորելու նպատակով:

Գրողներն իրենց հայացքը դեպի պատմությանն են ուղղում այն ժամանակ, երբ հասարակական- քաղաքական կյանքում տեղի են ունենում շրջադարձային բարեփոխումներ և ստեղծվում են նպաստավոր պայմաններ անդրադառնալու անցյալում ստեղծված թեմաներին:

Այդպիսի պայմաններ մեր գրողների համար ստեղծվեցին խրուշչովյան «ձնհալի» տարիներին, երբ գրական զարգացումները մտան առաջընթացի նոր հուն, գրողների առջև բացվեցին պատմական հայրենիքի ճանապարհներով անցնելու, ժամանակի տարբեր չափումները համադրելու լայն հնարավորություններ:

Եվ պատահական չէ, որ «ձնհալի» և նրան հաջորդող տարիներին ստեղծվեցին մեր պատմական անցյալին նվիրված տարբեր ժանրերի տասնյակ բարձրարժեք ստեղծագործություններ: Մեր պատմության տարբեր վամանակներն են նվրված

Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետ», «Շուշի», «Խոսեք Հայաստանի լեռներ», «Անդրանիկ», «Գարեգին Նժդեհ», «Թագուհին հայոց» վեպերը, «Վեց օր», «Մեռածները հրամայում են», «Արաքսը պղտորվում է» վիպակները, Ս. Այվազյանի «Ճակատագիրը հայոց», Զ. Դարյանի, Գ. Դևրիկյանի և ուրիշ արձակագիրների վեպերն ու վիպակները, Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն», «Եվ այր մի՝ Մաշտոց անուն», Վ. Դավթյանի «Թոնդրակեցիներ» պոեմները, Հ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Մ. Մարգարյանի, 1960 – ականներին գրականություն եկած սերնդի (Հր. Մաթևոսյան, Ռ.

Հովսեփյան, Ն. Ադալյան, Ռ. Դավոյան, Հ. Էդոյան, Ա. Հարությունյան, Ա. Մարտիրոսյան, Հր. Սարուխան և այլք) ստեղծագործությունները, որոնք հաղթահարեցին պատմության նկատմամբ անցյալ տասնամյակներում ձևավորված կարծրատիպերը, երբ պատմական շարժընթացը հիմնականում ներկայացվում էր որպես դասակարգային պայքարի պատմություն:

«Զնհալի» և նրան հաջորդած տարիներին գրված պատմական թեմաներով ստեղծագործություններում նկատելի է մի օրինաչափություն. մեր պատմությունը ներկայացվում է որպես հոգևոր մաքառումների շարժընթաց, որի ընթացքում մենք ոչ թե գոյատևել, այլ հաստատել ենք մեր ինքնությունը, ավելի ամրապնդել մեր կենաց ծառի արմատները, որոնք սնվել ու շարունակում են սնվել մայր հողի կենսատու լիցքերով:

Պատմության թեման առանցքայիններից մեկն է նաև Հր. Հովհաննիսյանի բանաստեղծական համակարգում, և եթե դրանք համախմբենք գաղափարագեղագիտական մի ընդհանուր առանցքի շուրջ, կունենանք հայրենիքի պատմական անցյալին նվիրված մի ասքապատում, որը կբացահայտի պատմության շարժընթացի հրաչյահովհաննիսյանական ընկալումները:

Հայրենիքի պատմությունը, նրա անցյալն ու ներկան միշտ ստեղծագործական ոգեշնչումների անսպառ աղբյուր են եղել բանաստեղծի համար:- Նա միշտ իրադարձությունների հորձանուտում էր. «Անընդհատ գործում էր, և գործում էր նվիրված ու եռանդուն, լուծում հրատապ հարցեր,բարձրացնում կարևորագույն խնդիրներ՝ աղետի գոտու զրկյալներից մինչև ազատագրական պայքարի մարտիկներ,փախստականներին տեղավորելուց մինչև հայոց հավերժական պահանջատիրություն, սովետի ղեկավարության դեմ տիզբոնյան առճակատումներից մինչև արցախյան կոնֆլիկտի պատմական հիմնավորումներ... Եվ այս պատճառով էր, որ տխրահռչակ Գորբոչովը 1989թ. ԽՍՀՄ պատգամավորական համամիութենական համագումարում (սովետների վերջին պատգամավորական հավաքը) մեղադրանքով լի նախատական խոսքեր ուղղեց Հր. Հովհաննիսյանին. «Знаю Вас, Знаю! Это Вы потворствуете бородачим, дав им место в Союзе писателей»[1]:

Հրաչյա Հովհաննիսյանը,սակայն, ոչ մի պարագայում չէր նահանջում. «...ավելին՝ զարմանալի եռանդով,ավյունով ու բացված «երկրորդ շնչառությամբ» ակտիվորեն ստեղծագործում էր,և այդ տարիներին գրած նրա բանաստեղծություններում («Դաժան դրախտավայր» և էսսեներում - հոդվածներում («Անկախության պերճանքն ու խեղճությունը») երևում են և՛ սերը, և՛ հոգեկան ներապրումներն ու խոկումները, և՛ հոգսը, անհանգստությունն ու մտասևեռումը՝ երկրի ու ժողովրդի ճակատագրի նկատմամբ»[2]:

---

[1] Հուշարձան Հրաչյա Հովհաննիսյանին, Երևան, Արևիկ , 2015, էջ՝ 23:

[2] Նույն տեղում:

Հր. Հովհաննիսյանի՝ պատմության թեմաներով գրված բանաստեղծությունները, որոնք նրա որդին՝ Դավիթ Հովհաննեսը խմբագրում է «քաղաքագիտություն-հայրենասիրություն» առանցքի շուրջ. (Այս երկու բառերը ես միացնում եմ գծիկով, ինչը պատահական չէ: Սովետահայ բանաստեղծի համար այս երկուսը հաճախ նույնանում էին և նույնիսկ՝ զարմանալի, միայն Աստծուն հայտնի ճանապարհով ընդունում մի յուրօրինակ «գրական էքսպանսիայի» ձև, դառնում ազգային հույսերի, հույզերի հեյզեր, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր կորուսյալ Հայրենիքին») սփռված են տարբեր տարիներին լույս տեսած նրա ժողովածուներում:

Հր. Հովհաննիսյանի հայրենապատումը սկսվում է 1940-ական թվականներին «Բաղձանք» (Ղարսի մոլոր, փշոտ, թափուր, լռած, կանչող ճամփաներում») բանաստեղծությամբ, որը տպագրվեց 1951-ին լույս տեսած «Երկրորդ հանդիպում» ժողովածուում, այնուհետև շարունակվեց «Հայոց պատմություն», «Արմավենու թուփը», «Անի թռչող մեղվին», «Ես քեզ սիրում եմ սիրուն հայրենիք», «Գեղոն Հայաստանի», «Հովերը ձայներ են բերում» և տասնյակ այս բանաստեղծություններում և ամբողջական տեսքի բերվում «Դաժան դրախտավայր» ժողովածուում, որը բանաստեղծի կարապի երգն է:

«Բաղձանքը» գրվել է 1940-ականների վերջերին և, բնական է, որ պետք էր անդրադառնար նաև տառապանքի ուղիով անցած հայրենիքի «պայծառ ապագային»

Թողած երկիր, օրոցք ու տուն,
Թողած բարդին հայրենի տան,
Տան մոխիրն էլ տված քամուն
Մենք բռնեցինք գաղթի ճամփան:

Հող ու հովիտ արյամբ ներկված՝
Փախչում էինք վշտի բեռով,
Մեր վշտի պես դառն ու երկար
Ղարսի մոլոր ճամփաներով:[1]

Թեկուզ նոր, վերածված հայրենիքում միայն այրող հուշն է մնում «Հույսի թափուր ճամփաների, թեկուզ «ձյունն է հոսում երգով ազատ,// Հուրն ենք վառում մեր հայրենի, սակայն բանաստեղծին մշտապես հուզում է ամենածանր մտահոգությունը.

Սակայն ինչու մեր հարազատ

[1] **Հովհաննիսյան Հր.,** Երկրորդ հանդիպում, Երևան, «Հայպետհրատ», 1951, էջ 86:

Հայրենիքը կիսված լինի…

Խորհրդանշական է հայրենի հողից զրկված, բանաստեղծի սենյակի մի անկյունում ծվարած արմավենու պատկերը («Արմավենու թուփը»).

Մարդկանց անտարբեր հայացքի ներքո կանգնած է մենակ,
Մինչ նրա նախնիք անտառո՛վ էին աշխարհում ապրում,
Ես գավաթով եմ հագեցնում նրա ծարավը անհագ,
Մինչ մի ժամանակ Եփրատն էր նրան մայրաբար ջրում:[1]

Մայր հողի և ջրի կենսատու հյութերով չի սնվում արմավենու թուփը, և նրա տերևները դեղնում են՝ «նման մենակ չվող կռունկի մեռնող թևերին՝

Եվ նման մենակ չվող կռունկի մեռնող թևերին՝
Ընկնում են նրա տերևներն անօգ, անձայն, անզգա…
Իմ սենյակի մեջ կանգնած է տխուր մի արմավենի՝
Դժբախտ մասունքը մեր մեծ անտառի, որ հիմա չկա:[2]

Մեր պատմության խտացված համապատկերն է ներկայացնում բանաստեղծն ընդամենը տասներկու տողանոց «Անմահություն» (Հայոց պատմություն) ստեղծագործության մեջ:

Տառապանքի դաժան ճանապարհներով է անցել երկիրն անհիշելի ժամանակներից մինչև 20-րդ դար. խաչվել է, խոցվել, տրորվել սմբակների տակ, այրվել «ատրուշանի բոցով», «ցցվել օսմանական սվիններին», բայց ապրել է, հարատևել՝ ի հեճուկս մեր հին ու նոր թշնամիների, և ի ուրախություն մեր անչափ քիչ բարեկամների.

Ես ընկել եմ պազշոտ Շամիրամի նետից,
Հին Հռոմն է զարկել ինձ մահացու խոցով,
Իմ արյունն են ոթել, խառնել Տղմուտ գետին,
Իմ լեզուն են այրել ատրուշանի բոցով:

Խաչ են դաջել կրծքիս մի բարբարոս զենքով,
Արաբական ձիու սմբակի տակ ցցել,
Ինձ խարույկ են հանել մոնղոլների ձեռքով,
Սիրտս օսմանական սվիններին ցցել:

[1] **Հովհաննիսյան Հր.,** Ծովի լռությունը, Երևան, «Հայպետհրատ», 1964, էջ՝ 158
[2] Նույն տեղում:

Ինձ հայրենի մեր տան թխկենուց են կախել,
Եվ հոգիս են բացել շղթաներով երկաթ.
Ինձ զրկել են, խարկել ու կենդանի թաղել...
Բայց ես — դեռ կա՛մ:[1]

Ընդհանրապես, ինչպես նկատում է մեր ժողովրդի մեծ բարեկամ Էդուարդաս Մեժելայտիսը, Հր. Հովհաննիսյանի «բոլոր բանաստեղծություններն իր հայրենիքի մասին են: Նաև «Վայրի վարդ» ստեղծագործությունը, որտեղ մենավոր ծաղկի դառը, ողբերգական շերտերի մեջ ընդգծում է, մի ամբողջ ժողովրդի, անհատի, բանաստեղծի ու քաղաքացու ոչ այն է խոհուն, ոչ այն է հպարտ տխրությունը: Ինձ համար հայրենիքին նվիրված բարձր բանաստեղծություն է «Վայրի վարդը»: Դա մեծ ժողովրդի, մեծ բանաստեղծի երկունք է՝ ծնված ամենամեծ ցավից ու հուսո ամենաբարձր աստղից»[2]:

Ինչն է ստիպել դարերի ընթացքում, որ «Շամիրամի այրուձին սրարշավ մտնի մեր հայոց տունը», որ «պարսից արքան զրադաշտական հրով կործանի մեր սուրբ տաճարն ու վանքը», որ «խալիֆաթի ելուզակները շեկ անապատից երեք դար անվերջ մեզ ավերեն», որ «թուրք ու թաթար փորձեն կտրել մեր Կենաց ծառը», որ «երկգլխանի արծվի աչքի տակ մեզ տան մահվան սև թույնը», և որն է մեր մեղքը, որ յոթ տասնամյակ խարդախելով մեզ՝ տարան այս խառնակ դարի դժոխքով՝ դառն ու դավախինդ»:

Բանաստեղծն այս համապատկերում բացահայտում է մեր լինելիության գաղտնիքը, մեր տեսակի առեղծվածային բնույթը բոլոր նրանց համար, ում կոկորդին մենք ամուր ոսկոր ենք եղել. մեր գեղեցկությունն է գրավել Շամիրամին, պարսից արքային հունից հանել է մեր վեհ դավանանքը, հոռոմներին՝ մեր ազնվությունը, թուրքին - թաթարին՝ մեր լույսը հանճարի, հյուսիսի «բարեկամներին»՝ մեր պարզամտությունը եղբայրության հանդեպ և մեր պարզամիտ հոգին:

Սրանք են մեր լինելիության հայտանիշները, որոնք մեզ հավերժ լինելու թևեր են տալիս.

Մեր լավի համար մատնեցին հրի,
Մեր ցավի համար քաշեցին սրի,
-Այսպես դիմացանք, դիմանում ենք դեռ,
Դարե՞ր ու դարե՞ր:[3]

---

[1] **Հովհաննիսյան Հր.,** Վայրի վարդ, Երևան, «Հայաստան» հրտ., 1968, էջ՝ 142:

[2] **Մեժելայտիս Էդ.,** Լույսի հավերժությունը, տես՝ Հուշարձան Հրաչյա Հովհաննիսյանին, էջ 207:

[3] **Հովհաննիսյան Հր.,** Դաժան դրախտավայր, Երևան, «Նաիրի» հրտ., 1993, էջ՝ 86:

Անսահման հավատով է լսված բանաստեղծը երկրի ապագայի հանդեպ, այն համոզմունքով, որ ժամանակը կբուժի բոլոր վերքերը, «լեռների մեջ բանտված, մի վեմը կանգուն, երեքը քանդված», «մի ձենը հեղձուկ, երեքը՝ ի զեն» հայրենիքը կանցնի նաև իր համար «սաղրած այս բավիղը գայթուն» ու կդառնա երկիր դրախտավայր.

Անբարիշտի ձեռքը կկտրվի բազկից,
Կողողանջի արդար տիրոջ երգը վսեմ,
Այնժամ սփոռցի մոտ գինու, ոսկե հասկի,
Ես իմ խոսքը մամոռոտ գերեզմանից կասեմ,
Թող քո լեզուն հնչի դարեր հազար ու բյուր,
Եվ աստված տա՝ դառնաս երկիր դրախտավայր...[1]

Татевик Погосян, На перекрестках истории (Восприятия Грачья Оганнисяна о процессе движения истории) - Статья посвещается произведениям Грачья Оганнисяна, написанные на тему истории, которые являются весомой частью его богатого литературного наследия. Делается попытка обьединить вокруг эстетической идеологической оси произведения написанные на эту тему в разных сборниках, что даст возможность раскрыть восприятия Грачья Оганнисяна о процессе движения истории.

Tatevik Poghosyan, In the crossroads of history (Hrachya Hovhannisyan's perseptions about the process of movement of history) - The article is devoted to Hrachya Hovhannisyan's works about history that make the weighty part of his rich litrary heritage. A tempt is done to unite all the works of this theme from different collections around an idiological aesthetical axis which will give an opportunity to reveal Hrachya Hovhannisyan's perseptions about the process of movement of history.

[1] Նույն տեղում, էջ՝ 104: